Կարդա՛ և լրացրո՛ւ բաց թողնված տառերը:

Թագավորն ուներ երկու **որդի**: Նա դժվարանում էր որոշել, թե որդիներից ով է ժառանգելու իր գահը: Եվ վճռեց **փորձել** նրանց: Հրամայեց կանչել մի քանի գյուղացիների: Երբ գյուղացիները ներկայացան, **թագավորն** ասաց.

-Ձավակնե՛րս, այս մարդիկ կարիքի մեջ են. պետք է օգնել նրանց:

-Շատ լավ,-ասաց **որդիներից** մեկը և սկսեց ոսկի բաժանել:

Իսկ մյուս որդին էլ թե.

-Ես նրանց գութան կնվիրեմ: **Ոսկին**, որ իմ եղբայրը այդպես **շռայլորեն** բաժանում է, մի օր կարող է վերջանալ: Իսկ գութանի գործը հողն է, անվերջ գոհացնող հողը, բոլոր նվերներից **ամենաթանկը**:

Շատ ուրախացավ ծեր **թագավորը** և գահաժառանգ հայտարարեց գութան նվիրող **որդուն:**

Հարցեր և առաջադրանքներ

Ինչո՞ւ փոքր տղան դարձավ գահաժառանգ:
Փոքր տղան դարձավ գահաժառանգը, որովհետև նա օգնեց գյուղացիներին ոչ թե սկսեց ոսկի բաժանել:

Դու ի՞նչ կնվիրեիր գյուղացիներին:
Ես գյուղացիներին կնվիրեի տներ, շորեր և ուտելիք:

Տեքստից դուրս գրի՛ր 3-ական գոյական , բայ և շաղկապ:

Գոյական	որդի	թագավոր	մարդիկ
Բայ	բաժանել	օգնել	վերջանալ
Շաղկապ	և	իսկ	թե

Գոյականներից առաջ գրի՛ր համապատասխան ածականներ։

Ծեր թագավոր

Խելացի որդի

Արժանի գահաժառանգ

կարիքավոր գյուղացի

փայտե գութան

գոհացնող հող

Ոսկի բառով կազմի՛ր 2-ական բարդ և ածանցավոր բառ։

Բարդ	**Ոսկեզօծ**	**Ոսկեգույն**
Ածանցավոր	**Ոսկեղեն**	**Ոսկիա**

Տրված ածանցավոր բառերը վերլուծի՛ր բաղադրիչների։

Ածանցավոր բառ	արմատ	ածանց
թագավոր	թագ	ավոր
գյուղացի	գյուղ	ացի
շռայլորեն	շռայլ	որեն
անվերջ	վերջ	ան

Տեքստից գտի՛ր և **գրի՛ր տրված բառերի հոմանիշները։**

Արքա – **Թագավոր**

Ընծայել - **նվիրել**

Ավարտել – **վերջանալ**

Տեքստից գտի՛ր և գրի՛ր տրված բառերի **հականիշները։**

Քիչ - շատ

Երիտասարդ - ծեր

Տխրել - ուրախանալ

Կազմի՛ր բառակապակցություններ։

թագավորի գահ

Թանկարժեք ոսկի

շռայլորեն **բաժանել**

նվիրել **գութան**

Համառոտի՛ր պարզ ընդարձակ նախադասությունները։

Ծեր թագավորը շատ ուրախացավ։
Թագավորը ուրախացավ։

Շարունակի՛ր։

Երբ մարդիկ կարիքի մեջ են պետք է իրենց օգնել։

Թագավորը հայտարարեց , որ գութան նվիրող որդին իր գահաժառանգն է լինելու։

Գծով միացրո՛ւ ասացվածքների սկիզբն ու վերջը։

Աշխատասիրությունը

Անգործությունը

Անբանի համար

Աշխատասեր մարդուն

Ծուլություն է ծնում։

Բախտի աջ ձեռքն է։

Երկինքն էլ է օգնում։

Ամեն օր տոն է։

Մի քանի նախադասությամբ շարունակի՛ր պատմությունը։
Որդին երբ հաջորդ թագավորը դարձավ նա սկսեց օգնել բոլոր գյուղացիներին։ Որդին գյուղացիներին օգնում էր գյուղատնտեսությամբ և այդ պատճառով ոչ մեկ սովաած չեր մնում։ Մի խոսքով այս որդին դարձավ շատ ճանաչված թագավոր։